## 85. ՄԱՍՏՈՒՆ ՕՑԸ

Մին թաքավըրի մեհետ մին արազ ա տըեսնում, ը̈իրա̈ն ըրհա̈թին, ը̈իրա̈ն նա̈զիր-վեզիրավը դույուղ ա անում, վըեր հու գյիդա̈ ըրազումըս հինչ ըմ տըեհալ, հիշքան վըեսկե, փող վըեր օղըե, տըլաան ըմ, յա վըեղես կեսն ըմ տըլաան։

Թաքավըրերեն վիթանումը վըերքան խըելունք մարթիքյ կին, հըվըքվեցեն ը̈իրա̈ն պալատը։ Ամմըեն մինը մին պեն ա ասում․ յա ղորթ կինի, յա սուտ։ Վըեչ մինը կըրեցավ վուչ ղորթ ասըե։ Թաքավըրերեն քըղաքան հեռու մին մարթ ա ինո̈ւմ ըպրելիս ը̈իրա̈ն կնգանավը. էս մարթին կնեգյը մին օր ը̈իրա̈ն մարթին ափաթը կըտրում ա՝ թա տու վըս, վըեր տու վըս, պիտի քյինաս մին պեն էլ տու ասըես, յա ղորթ տո̈ւս կըկյա, յա սուտ։

Էս մարթը ճարը կըտրած էր ա կենում հըղե ինո̈ւմ բիդի թաքավըրերեն պալատը։ Մահիս ամըեսն ար, օցեր տո̈ւս կյալիս վախտը։ Վըեր հըղե յա ինո̈ւմ ղըոըխմիշ իլա̈ծ քյինա̈մ, հըըցեն քըշտան մին օց ծեն ա տամ.—Ախպըեր, հիշտեղ ը՞ս քյինա̈մ, մին մուտաց տըեսնամ։ Էս մարթը վըխվըխելավ մոտանում ա, ըսկսում նաղլ անըել, հինչ վըեր պըտահալ ա։ Օցն էս մարթին ահում ա.— Վըեր քյինա̈ս թաքավըրերեն կուշտը ը̈իրա̈ն արազը նաղլ ընելի հետե, կահես, վըեր թաքավըրըն ապրած կենա, ըրազումըտ տըեհալ ըս երգյինքումը թո̈ւվա̈նգյը սարած, վըեխճարը նան կյո̈նկը ը̈իրո̈նք նհըետ կըռե ընելիս, ամմա դե ըհելան ետը հինչ վըեր տա,

կըպիրրիս ինձ նհըետ կես անըեսւ էս մարթը չունուրհակալ ահեց, ուրխացած հըն իլա՛վ բիդի թաքավըերըն պալատը։ Թաքավըերը վըեր տըրան ծեն տուվավ ո՛ւրա՛ն կոչտը, տա թա՝ թաքավըերըն ապրած կենա, տու ըրագումըտ տըեհալ ըս երգյինքյումը թո՛նվա՛նգյը սարած, վըեխճարը նան կյոկը ո՛ւրո՛ւր նհըետ կըռե ըն անում։ Թաքավըերըն ո՛ւրա՛ն նուքյըրներըն դույուղ արավ, թա վըեսկուս սանդողը պերեքյ, հիչքան վըեր օղում ա, թող յոր օնըեւ էս մարթն էլ դե աչկը ծակ սաե, իլի, վըերքան կըկարե հըեննի տանե, յոր ա օնում հըըցավը հունց քյինա՛մ, վըեր օցը տըեհնա վուչ։

Ախըրը, Թըքըընթաքուն հըսնում ա տոն։ Էտ թաքավըերըտ, ախեր դե, մին արագ էլ ա տըեհնում. էտ մարթը մնամ ա կրակեն մաչն ինգյած, գյո՛ղո՛ւմ ա, վըեր ո՛ւրա՛ն ըն ծեն տըլական, օցըեն կոչտն էլ քյինա՛լի իրես չօնըեւ

Էլլա հա՛մա՛ն մարթիքյը հըվաքվում ըն թաքավըերըն պալատը՝ ո՛ւրա՛ն տըեհած արազն ըսելի հետե։

Վըեչ մինը վըեր կարում չի դո՛ւզ սաըե, էտ մարթին ըն դույուղ անում. տա յել ճարը կըտրած եր ա կենում հըն ինո՛ւմ. օղում ա Թըքըընթաքուն հենց քյինա՛, վըեր օցը տըեհնա վուչ։ Հըեննի քյինա՛լիս՝ հրաչկավ ար, թա հինչավ ար, էտ օցըեն սա՛ռը ըսկանում ա.—Թաքուն միլ քյինալ, իստի եք, պեն օնըեմ ըսելի։

Ախըրը ջանը տո՛ղ ինգյած քյինա՛մ ա բիդի օցը. օցը թա՝ վըեր քյինա՛ս, կահես՝ թաքավըերըն ապրած կենա, ըրագումըտ տըեհալ ըս վըխճարը նան կյո՛կը երգյինքումը մին տըեղ ըըծելիս։

Էտ մարթը եր ա կենում հա՛մա՛ն հըըցավը քյինա՛մ բիդի թաքավըերը։ Հինչ վըեր օցն ահալ ա, ինդի յել ահում ա։ Թաքավըերը սո՛ւրթա՛ վըխտեն մնան վըեսկում սընդուղնեն պեց անըել ա տամ, թա՝ հիչքան վըեսկե օղում ա, թող յոր օնըե, տանե։ Հիչքան վըեսկե կարում ա, յոր ա օնում, էլլա սո՛ւրթա՛ մնան օղում ա օցըեն անա թաքուն քյինա՛, ամմա դե օցը տըեսնում ա հըռըցանա, ծեն տամ.—Իստի եք, վախումիլ։ Էտ մարթը վըխվըխելավ քյինա՛մ ա բիդի օցը, ղաչանք անում, թա թող ծըեռքես վըեսկեն քըշտիտ կենա, քյինա՛մ սո՛ւրթա՛ դո՛նո՛ւմեն պերա՛ծն էլ պիրիմ։ Եր ա կենում, քյինամ, հիչքան վըեր վըեսկե կա, լոխ պիրում օցըեն կոչտը։ Օցն ահում ա.—Ախպըեր, ախեր դե վըեսկեն հինչիս ա՞հաջա՛թ, ես քու մըրթոթունըտ ըմ փորցում. տար, հիչքան վըեր վըեսկե յըս պերալ, ինձ հա՛ջա՛թ չի, վըեղըն տակեն հիչքան վըեր լա՛վլա՛վ տըեղեր կա, լոխ իմն ա, ոտըեխըս էլ վըեղ ա, վըեսկեն իմ հինչիս ա՞ հա՛ջա՛թ, ամմա էն մին դո՛նո՛ւմն էլ վըեր մին պեն փո՛նըես, տի ղա՛լա՛թ չանես։